1. Բաժանորդը, միանալով «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթի բաժանորդ և.
   - Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին ամսվա ընթացքում Ծառայությունները ստանում է 1 դրամով,
   - Ստանում է Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) 1 դրամով[1] օգտագործման իրավունք (բաժանորդը կարող է հրաժարվել վերոնշյալ արտոնությունից):
2. Wi-Fi սարքի 1 դրամով օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթի պայմաններով սահմանված (1 տարի) ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi սարքն անհրաժեշտ է Բաժանորդին ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
3. Եթե Բաժանորդը «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթին բաժանորդագրվելիս իր ցանկությամբ չի օգտվում Wi-Fi սարքի 1 դրամով օգտագործման իրավունքից, ապա «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
4. Եթե Բաժանորդը «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթին բաժանորդագրվելիս իր ցանկությամբ չի օգտվում Wi-Fi սարքի 1 դրամով օգտագործման իրավունքից, ապա «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
5. «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում տվյալ սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարաձգվում է ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ: «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է «Ռինտերնետ տարեկան» սակագնային փաթեթից ծառայության ակտիվացման օրվանից սկսած առնվազն տասներկու ամիսների (365 օրացուցային օրերի) ընթացքում:
6. Եթե Բաժանորդը դադարեցնում է «Ռինտերնետ տարեկան 6000» կամ «Ռինտերնետ տարեկան 7000» սակագներին բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը Օպերատորին ամբողջապես վճարում է ընթացիկ պարտքը և տուգանք 20000 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով:
7. Եթե Բաժանորդը դադարեցնում է «Ռինտերնետ տարեկան 7500» կամ «Ռինտերնետ տարեկան 10000» սակագներին բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը Օպերատորին ամբողջապես վճարում է ընթացիկ պարտքը և տուգանք 30,000 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) չափով:

[1] Wi-Fi սարքի՝ 1 դրամով օգտվելու իրավունքը գործում է միայն «Ռինտերնետ տարեկան 7500» և «Ռինտերնետ տարեկան 10000» սակագների Բաժանորդների համար:

8. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:
9. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: